

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՅԻ ԱԶԳ. ԽՈԲՀՈՒԹՅՈՒՆ

ԿՈԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ ՎԱՐՉԱՐԻԹԻՒՆՆԵՐՈՒՄ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐ. ԺՈՂՈՎԻ ԴԻԼԱՅԵՐՆ

Մարտ 4ին, 1945, Նիւ Եորքի Փենսիլվանիա Հօթելի սրահներէն միոյն մէջ զումարուեցաւ Խամկավար Ազատական Կուսակցութեան, Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան և Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեղըոնական Վարչութիւններու խորհրդակցութիւնը, Երեք Կազմակերպութեանց պատասխատու ներկայացուցիչները, մէկտեղ Եկած, քննարկեցին իրենց տարուան մը զործակցութեան արդիւնքները, Անոնք մասնաւորապէս չեշտեցին այն սթափնդիչները, որ այս Երեք Կազմակերպութիւնները կատարեալ համերաշխութեամբ եւ փոխադարձ վստահութեամբ զործած են Սպային Խորհուրդին մէջ, իրենց չուրջ հաւաքերգ ու եւ ու զմայիւ Հայրենակցականներ և մշակութային այլ Կազմակեպութիւններ ժողովականները մաւնաւոր զոհունակութեամբ մատնանշեցին այն իրողութիւնը, որ Ազգային Խորհուրդը զործակցած է և պիտի շարունակէ զործակցիլ Ամերիկահայոց Առաջնորդարանի և Հ. Բ. Ռ. Մ. ի հետ այն նպատակն ըուն չուրջ՝ որոնք ազգային ընդհանուր ընոյիլ կը կը են:

Ժողովը որոշեց ներկայ ճակատագրական և վճռական օրերուն ամէն կերպով աչալուրջ ըլլալ և առնել այն ըուրը քայլերը, որոնք անհրաժեշտ են Հայ ժողովուրդի քաղաքական և տնտեսական շահերու օլաշտագանութեան և զաղթական Հայերու Հայկական հողին վրայ վերաբնակեցման համար:

Ժողովը որոշեց նեցուի կենալ Խրիսի Խորհրդաժողովի որոշումներուն և Սան Ֆրանսիսքորի Խորհրդաժողովին, միաժամանակ զատադարտելով Հայ ժողովուրդի դարաւոր թշնամն և այս սառերազմին մէջ իր չեղոքութեամբ Հիմլէրական Գերմանիոյ օգնող Թուրքիայի մետասաներորդ ժաման պատերազմ հրատարակելու աքիլլը, Սլիլլրէն մինչեւ վերջ կը տիրէր համերաշխութեան հիանալի ողիւ, Մարտ 4ի ժողովը ցայտուն կերպով երեւան ըերաւ, որ Խամկավար Ազատական Կուսակցութեան, Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան և Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան ղեկավար մարմիններու միջն կը տիրէ լիակատար հարածայնութիւն թէ՛ նպատակի եւ թէ զործելակերպի քաղաքական ըուրը խնդիրներու չուրջ:

Ժողովականները ցըսւեցան, յանձին Ազգային Խորհուրդի Ասերիկահայ զաղութի մէջ ստեղծուած միասնականութիւնը ալ աւելի խորացնելու, ծաւալելու եւ հիմնաւորելու վճռականութեամբ, յանուն Հայ ժողովուրդի շահերուն, յանուն Միացեալ Ազգերու զէնքերու յաղթանակին, յանուն տեւակա՞ եւ արդար խաղաղութեան:

Խառն Ժողովի Դիւան — ՊԵՏՐՈՒՄ Կ. ԹԷՐՁԵԱՆ Ա-
տենապետ, ՕԴՍՀՆ ՍԱՐԵԱՆ Քարտուղար,
Մարտ 4, 1945, Նիւ Եորք